Ծուշանիկ Կուրղինյան

Տրտունջ

Իմ մրմուռ, միշտ անլուռ ցավերգով,
Ա՛յ, անգին, քո հոգին ձանձրացավ,
Որ անդարդ ու հանդարտ եզերքով
Հեռացար քեզ համար, առանց ցավ:

Իսկ ես հեզ, փրփրադեզ ծովի մեջ
Պիտ լողամ ու դողամ մինչև լույս .
Մինչ ծագի նոր այգի լուսաէջ
Վառ արփին սև ափին արշալույս:

Լուսաշող, հուսաշող ջինջ շողին
Անհառաչ ընդառաջ ես կերթամ,
Եվ պսակ ու դրոշակ հաղթողին
Կըհյուսեմ ես վսեմ ու փարթամ:

Դու խղճուկ, կամացուկ ետ կուգաս,
Կըձգտես գողի պես ինձ սիրել .
Իմ ուժից, վրեժից հետ կերթաս՝
Հաղթված ու ատված անարգել: